

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ համայնքի
ղեկավարի 2016թ. առաջին կիսամյակի հաշվետվության

կայացած 11 հուլիսի 2016թ. ժամը 12⁰⁰-ին

Մասնակցությամբ -Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար
Փառանձեմ Կարապետյանի, ավագանու անդամների,
համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների և համայնքի
թվով 52 բնակիչների

Նախագահությամբ՝ Մ.Միքայելյանի

քարտուղարությամբ՝ Գ. Խուրշուդյանի

Լսեցին.- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ
համայնքի ղեկավարի 2016թ.1-ին կիսամյակի հաշվետվությունը

Արտահայտվեցին համայնքի բնակիչներ Աշոտ Խաչատրյանը,Հրաչյա
Մինասյանը, Հարություն Հայրապետյանը, Լեռնիկ Հակոբյանը Շուշան
Անտոնյանը և Սամվել Գրիգորյանը

Ելույթ ունեցողները նշեցին, որ համայնքի ղեկավարը իր ելույթում
մանրամասը ներկայացրեց կատարված աշխատանքները և համայնքի
ղեկավարի 2016թ.1-ին կիսամյակի աշխատանքները գնահատում ենք
բավարար:

Որոշեցին –

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ համայնքի
ղեկավար Միխայիլ Պետրոսյանի 2016թ. 1-ին կիսամյակի
հաշվետվությունը կատարած աշխատանքների մասին
գնահատել բավարար:



Միխայիլ Պետրոսյան

Մ.Միքայելյան

Գ. Խուրշուդյան

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1-ին կիսամյակ

Արմավիրի մարզի Տանձուտ համայնքի ղեկավարի կողմից 2016թ.
1 կիսամյակում կատարված աշխատանքների մասին

Ներկայացված է 11.07.2016թ. համայնքի ժողովում:

/Ձեկ . համայնքի ղեկավար Մ.Պետրոսյան/

Հարգելի համագյուղացիներ և հյուրեր, թույլ տվեք Ձեզ
ներկայացնելու Տանձուտի համայնքապետարանի և ավագանու կողմից
2016թ-ի հունվարի 1-ից մինչև հունիսի 30-ը կատարած աշխատանքները:

Ընթացիկ ժամանակաշրջանում անցկացրել ենք 6 ավագանու նիստ՝
կայացրել 25 որոշումներ: Պատասխանել ենք ստացած 116 մտից
գրություններից 76-ին և 75 դիմումներին,

Համայնքի ղեկավարի կողմից հաշվետու ժամանակաշրջանում ընդունվել
է 27 որոշում և արձակվել է 23 կարգադրություն:

Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին տրամադրվել է
370.0 հալ. դ. դրամական օգնություն:

Կատարվել է խմելու ջրի խորքային հորերի կապիտալ վերանորոգում և
ապահովել բնակիչներին անխափան ջրամատակարարում:

Կատարվել է խմելու ջրի սանիտարաքիմիական և մանրէաբանական
հետազոտություններ:

Համայնքում սիստեմատիկ կատարվել է աղբաթափում:

համայնքապետարանում ստեղծվել է հանձնաժողով կատարվել է
անասունների և համայնքի տարածքում գտնվող հողերի և ցանքերի
հաշվառում:

Հանձնաժողովի կողմից կատարվել հունիսյան ցանքատարածությունների
հաշվառում

Մեծ հաղթանակի 71-րդ տարեդարձի նախօրյակին խնամվել է գյուղի
կենտրոնում գտնվող հուշարձան և կազմակերպվել է միջոցառում:

Գյուղում գործում է 19-րդ դարի եպեղեցի, որը օգնում է համայնքի
բնակչության հոգևոր դաստիարակությանը:

Ընթացիկ ժամանաշրջանում կատարվել է համայնքի կոյուղու ցանցի մաքրման աշխատանքներ :

Սահմանված կարգով կազմակերպվել է գույքահարկի և հողի հարկի գանձման աշխատանքները:

Կատարվել է խմելու ջրի ջրագծերի վթարների վերացման աշխատանքներ :

Հողի հարկի կիսամյակային պլան է նախատեսվել 3160.0 հազ.դրամ փաստացի կատարվել է 665.8 հազ.դ. 21 % -ով:

Վարձակալական հողերի վարձավճարների կիսամյակային պլանը կազմել է 1100.0դրամ, փաստացի կատարվել է 1098.1 հազ.դ., 99.8 % -ով:

Գույքահարկի գծով կիսամյակային պլան է նախատեսվել 1700.0հազ.դր.,փաստացի կատարվել է 910.4 հազ.դրամ, 53.5 % -ով:

Տեղական տուրք է նախատեսվել 150.0 հազ.դրամ փաստացի 74.0 հազ.դրամ 49.3% -ով:

Մատուցվող ծառայությունների դիմաց տարեկան պլանը նախատեսվել է 650.0 հազ.դրամ, փաստացի կատարվել է 163.5 հազ.դրամ 25.1% -ով:

Համայնքի սեփական եկամուտների պլանը ընդամենը կազմել է 6760.0 հազ.դրամ, փաստացի կատարվել է 2911.8 հազ.դրամ, 43 %-ով:

Պետության կողմից համահարթեցման սկզբունքով ստացված դոտացիան կատարվել է 100%-ով 15618.2 հազ.դրամ:

Հողի օտարում նախատեսվել է 1000.0 փաստացի 106.5 :

Կանանց միջազգային օրվա արթիվ համայնքում կազմակերպվել է միջոցառում,հանձնվել է նվերներ համայնքային ենթակայությամբ աշխատող կանանց և աղջիկներին,դպրոցի ուսուցչուհիներին և տարեց թոշակառու կանանց:

Մասնակցել ենք Սարդարապատ հուշահամալիրում կազմակերպված Հանրապետության օրվան նվիրված միջոցառմանը:

Համայնքապետարանը մասնակցել է դպրոցի վերջին զանգի միջոցառմանը, շրջանավարտներին տրվել է նվերներ:

Մայիսի 16-ից համայնքում գործում է մանկապարտեզ, որտեղ հաճախում են 55 երեխա : Մանկապարտեզը ապահոված է տաք և սառը ջրով :

Համայնքապետարանը աշխատավարձի պարտքեր չունի:

Համայնքն ունի բազմաթիվ չլուծված խնդիրներ:

Հետագա ծրագրերում նախատեսված է մանկապարտեզի վերանորոգում
Խմելու ջրի ջրագծերի վերանորոգում, համայնքը չունի համապատասխան
միջոցներ և ակնկալում է պետական աջակցություն :

համայնքապետարանի կողմից արվում է ամեն ինչ աշխատանքները
կազմակերպված և արդյունավետ անցկացնելու համար:

Համայնքի ղեկավարը բարձրացրեց հետևյալ հիմնախնդիրները

1. Մանկապարտեզի շենքի վերանորոգում
2. Նոր ջրագծի կառուցում
3. Հուշարձանի վերանորոգում
4. համայնքապետարանի շենքի վերանորոգում
5. Համայնքի կոյուղու վերանորոգում
6. Մշակույթի տան վերանորոգում
7. Գրադարանի շենքի վերանորոգում

Տանձուտ



/ Ս. Պետրոսյան /